



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

L 4 n  
1434-1441

1-50

1999



ԿՐԹԱՐԱՆ  
ԱՒԵՏՈՐՆԵԿԸՆ ԲԱՆԻՑ

ԳԱՍԵ.

ԱՆՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆ ԿՐՕՆԱԿԱՆ

Ի

Մ. ՎԱՐԴԱՊԵՏԻ ՄՈՒՐԱՏԵԱՆՑ  
ՔԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՈՒԽՏԻ Ս. ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

ՀՐԱՄԱՆԱԻ

ՊԱՏՐԻԱՐԻ ՍՐԲՈՑ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

Տ. ԵՍԱՅԵԱՅ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ



ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

1875



Կ Ր Թ Ա Ր Ա Ն  
ՄԻՏԱՐԱՆԱԿԱՆ ԲԱՆԻՑ

Գ Ա Ս Ե .

ԱՆՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆ ԿՐՕՆԱԿԱՆ

ԱՍԵ ցնա Պիղատոս : ապա եթէ այդպէս ի-  
ցէ : թագաւոր ոմն եւ դու : Պատասխանի եւ Յի-  
սուս . դու ասես՝ թէ թագաւոր իցեմ՝ : բայց ես  
յայգ իսկ ծնեալ եմ՝ և ՚ի դոյն իսկ եկեալ եմ՝ յաշ-  
խարհ . զի վկայեցից ճշմարտութեանն . ամենայն .  
որ ՚ի ճշմարտութենէ է : լսէ բարբառայ իմոյ : Ասէ  
ցնա Պիղատոս . Ձի՛նչ է ճշմարտութիւնն . զայս  
իրբեւ ասաց : դարձեալ ել առ Հրէայնն և ասէ  
ցնոսա . ես եւ ոչ մի ինչ պատճառս գտանեմ՝ ՚ի  
ւմա : ՅԻԼ . ԺԸ . 57-59 .

ՀՌՈՎՄԱՅԵՑԻՆ Պիղատոս , ան-  
ուանեալն Պոնտացի , որ ծննդեամբ ,  
տաղանդով կամ հնարագիտութեամբ  
հասած էր բարձրագոյն պաշտօնի , երբ  
Հռովմէն ելաւ Հրէաստան գալու և  
Տիբերեայ կայսեր անուամբ զայն կա-

41438-60

28. 1441

ուսովարելու համար, անշուշտ ամենեւին չք նախատեսեց, որ իւր ստորին պաշտօնավարութեան հետ պիտի գայ միանայ մի մեծ եւ վատահամբաւ հռչակ: Պիղատոս զբաղուած էր նիւթական խորհրդներով եւ իւր ապագայ պաշտօնավարութեան մէջ ուրիշ բաղդի երազներ կը տեսներ: Նա մեծցած էր իւր դասու մարդկանց պէս արհամարհել ամեն հաւատալիք, եւ ամենեւեւ չ'էր մտածէր, որ իւր գաւառապետութեան սահմանագլուխն ոտք կոխելով՝ պիտի մտնէր հրաշից երկիրն: Չը գիտէր, որ այն օրն, զոր պիտի շնչէր, ծանրաբեռնուած էր մարգարէութեամբ: Չը գիտէր, որ Հրէաստանի գերօրինակ երկիրն շնչասպառ կը հեծէր մի խորհրդաւոր ակնկալութեամբ: Չը գիտէր, որ մի աստուածային տեսարան, մի սքանչելահրաշ թատր բացուելու վերայ էր, և նոյն ինքն Պիղատոս պիտի իւր գերը խաղար այս անհամեմատ տեսարանին մէջ, ուր Առուածոյ տնօրէնութիւններն պիտի

կատարուէին մարդկային ազգի համար: Եթէ իւր առաջին քայլափոխին մէջ փառք կը նշմարէր Պիղատոս, այս փառքը քաղաքական երկնակամարին վերայ կը տեսներ, ուստի, ընդհակառակն իւր աստղը պիտի ընկնէր, և չը գիտէր ամենեւին, որ Նախասինամու թիւնն հազարներու մէջէն ընտրած է զինքն, որ մինչեւ 'ի կատարած աշխարհի մնայ կատարեալ տիպար կրօնական անտարբերութեան: Այսպէս իսկ եղեւ: Ինչ յատկութիւն, որ տանք Պիղատոսին, թէ թոյլ մարդ անուանենք, թէ փառասէր, թէ անիրաւ գատաւոր, այս ամենը դարձեալ կը պարունակին իւր անտարբերութեան մէջ: Անտարբերութիւնն Պիղատոսի բնաւորութեան յատկական գծագիրն է, և այս յատկութիւնն է, զոր արժան է քննել:

Աւետարանիչներն ինչ որ խօսած և աւանգած են մեզ, բոլորն այս անտարբերութեան կը վերաբերին, և այս բնաւորութեամբ է, որ կը ներկայանայ մեզ այս ստեղծի և աղետալի հրաւ



չախաւ համբաւեալ անձն :

Բայց տախաւին մեր նայուածքն սոյն անտարբերութեան տիպարին վերայ չք ձգած, բարձրացնենք զայն դէպ ՚ի Յիսուս, որ մեր բնաբանին մէջ կը ներկայանայ հանդէպ Պրզատոսի : - Պնտացի Պրզատոս եւ ՅԻՍՈՒՍ : - Ի՛նչ հակադասուիտեր երկու անձանց մէջ : Ի՛նչ անհամեմատութիւն երկու ցունց խօսակցութեան մէջ :

Հրէական կատաղի բազմութիւնն կը բերէ զՅիսուս Պրզատոսի առաջ և կը պահանջէ դատապարտել : Հուովմայեցի դատաւորն նախ կուզէ իմանալ թէ ի՛նչ յանցանք ունի Յիսուս : Կատաղի բազմութիւնն Յիսուսի բարութիւններէն և յայտնի անմեղութենէն շփոթուած զըստարտութեան կը դիմէ . կ'ուզէ այնպիսի մեծ ամբաստանութիւն ամբաստանել, որ զՅիսուս կորուսանէ : Ոչ թէ կ'ուրանայ նորա առաքինութիւններն ու բարութիւններն, այլ յանցանաց կը վերածէ և իրբեւ յանցանք կը մեկնէ : Ամեն մարգ կը զար-

մանայ Յիսուսի վերայ, ամեն մարդոյ երախտադիտութիւն կը ներշնչէ, եւ ահա այս ամեն աստիճաններն են, ընդ որս նա դէպ ՚ի դահն կը դիմէ : Նա կը դիմէ սրտերն նուաճելով և յափշտակելով : Նա կամի թագաւոր լինիլ Հըրէից, և ո՛վ կարէ տարակուսիլ այս մասին, քանի որ ինքն իւր բերանով կը խօսի : Այս կերպիւ կը մեկնէ ահա Հրէական բազմութիւնն Յիսուսի Քրիստոսի ընթացքն ու գործքերն : Սոյն ամբաստանութիւնն այնչափ յառաջ գնացած է, որ այլ եւս ապացուցի կարօտութիւն չէ մնացած : Ամբաստանողք և զբարտախջք կ'ազազակեն, Պրզատոս կը շուարի . մի կողմէն զբարտախջերուն կը նայի, միւս կողմէն Յիսուսին, որոյ վերայ մինչեւ ցայնվայր ուշադրութիւն դարձուցած չէր . ուստի և կամի հարցախորձել և քննել զՅիսուս :

Արչափ կ'ավրի Պրզատոս, երբ կը տեսնէ թէ այս տարօրինակ ամբաստանեալն, փոխանակ իւր անձն պաշա-



պանելու, դատապարտութեան առաջն կը մղուի, տակաւին մանրամասն չը քննուած՝ իւր ամբաստանութիւնն կը ծանրացնէ եւ երբ դատաւորն կը հարցնէ. « Զինչ գործեալ է քո », այս խօսքերով կը պատասխանէ. « Իմ արքայութիւն ( ուրեմն արքայութիւն ունի ) չէ՛ յայտ աշխարհէ. եթէ յաջ խարհէ աստի էր արքայութիւնն իմ, սպասաւորքն իմ մարանէին արդեօք՝ զի մի մասնեցայց Հրէից. բայց արդ՝ թագաւորութիւն իմ չէ աստի: ( Ա՛րդ, — ուրեմն եթէ ոչ այժմ, անշուշտ մի օր պիտի թագաւորէ ) :

Ուրեմն Պիղատոս այլ եւս հարկադրուած կամ ստիպուած չէ ամբաստանողներէն. վասն զի ամբաստանելոցն խոտտովանութիւնն ինքնին իրաւունք կը տայ ամբաստանողաց, Բայց որչափ որ սոյն կամովին և աներկիւղ խոտտովանութիւնն ինքնին ՚ի դատապարտութիւն կը տանի, սակայն այնչափ տարօրինակ է, որ հարկ է հաստատել և այնպէս վճիռ տալ. Պիղատոս

տոս մի երկրորդ յատուկ հարցումն եւս կ'առաջարկէ, որոյ մէջ դատապարտութեան նիւթն պարզապէս և բառ առ բառ որոշուած է. « Ուրեմն թագաւոր ե՞ս դու »: Այն ժամանակ տիեզերաց թագաւորի բերանէն այս նշանաւոր խօսքերն կ'ընեն. « Գուսեսս՝ թէ թագաւոր իցեմ. բայց ես յայդ իսկ ծնեալ եմ և ՚ի դոյն իսկ եկեալ եմ յաշխարհ, զի վիսյեցից ճըշմարտութեանն, ամենայն, որ ՚ի ճըշմարտութեանէ է, լսէ բարբառոյ իմոց »:

Սկզբէն մինչ ՚ի վախճան ի՛նչ տարւորինակ տպււորութիւն սկիտի անէին այս պատասխաններն Պիղատոսի վերայ: Առաջին խօսքերէն Պիղատոս այնպէս կը կարծէ, որ իրեն ներկայացած ամբաստանեալն մի այլանդակ փառասէր մարդ է, որ իւր զխաւութիւններն ՚ի կատար հասուցանելու համար բնաւ պատրաստի միջոցներ չունի և սակայն այնչափ վատահէ կատարման համար, ամենեւին չը կեդք ծէր, այլ յայտնապէս կը խօսի: Բայց



յեաազայ խօսքերէն Պիղատոսի գազափարսնէն բոլորովին կը շիտթուին .  
 « Եւ ՚ի դոյն իսկ եկեալ եմ յաշխարհ ,  
 զի վկայեցից ճշմարտութեանն » : Ի՞նչ պաշտօն մի թագաւորի համար . ի՞նչ տարօրինակ թագաւորութիւն . ի՞նչ շիտթութիւն գաղափարաց : Պիղատոս որ ամենեւին կարող չէր ամենափոքր յարաբերութիւն նշմարել այսպիսի անհամաձայն գաղափարաց մէջ , խկոյն ինքնին վճռեց , որ գործ ունի ոչ թէ փառասիրի , այլ մի երազագիտի հետ : Երազագէտ . ահա քեզ արժանի առարկայ դատաստանական քննութեան . ահա քեզ արժանի պատճառքադարագիտական յուզման : Պիղատոս հասկացաւ իւր գործն և այս արհամարհական հարցումն առաջարկեց ամբաստանելոյն . « Զի՞նչ է ճշմարտութիւնն » . և պատասխանւոյն չք սպասելով գործաւ դէպ ՚ի Հրէաններն եւ ասաց . « Ես՝ և ոչ մի ինչ պատճառագտանեմ ՚ի նմա » :

Ամենայն ինչ վսեմ է այս խօսակ-

ցութեան մէջ . վսեմ է նա և Հռովմայեցւոյն վերջին խօսքերն : Ո՞վ կարող է չք զարմանալ Յիսուսի Քրիստոսի բացարձակ պատասխանւոյն վերայ : Ես թագաւոր է , բայց ի՞նչ կերպիւ : Ի՞նչ բանի մէջ կը կայանայ նորա թագաւորութիւնն : Արտաքին նկատմամբ թագաւորութիւնն է արժանաւորութեան ամենաբարձր աստիճան , որում մարդ կարող է հասնիլ իւր նմանեաց մէջ : Բայ յայսմանէ թագաւորութիւն է մի կամքի անդիմադրելի տիրապետութիւն հաղարաւոր նուաճեալ կամաց վերայ : Արդ՝ այս երկու նկատմամբ եւս թագաւորական արտոզոյնն արժանանալու համար ոչ գահ պէտք է , ոչ գանձ , ոչ երկիր , ոչ զօրք : Կան մտքով թագաւորողներ , որոց թագն աւելի մեծ փայլ կ'արձակէ , եւ որոց տիրապետութիւնն ոչ այնչափ զգալի է և ոչ այնչափ երկիւղալի , և ասկայն աւելի իրական է , աւելի ընդարձակ և աւելի անխորիս : Հանձարն կը թագաւորէ հոգիներու վերայ , կը



Թագաւորէ գերեզմանի խորքէն , կը  
Թագաւորէ այն սերնդոց վերայ , որք  
տակաւին յաշխարհ եկած չեն և նորա  
ոչ փառքն կը յափշտակուի իրմէն և  
ոչ տիրապետութիւնն : Եթէ այսպէս  
է , ուրեմն ինչո՞ւ աւելի չ'ընդարձա-  
կենք Թագաւոր տիրողոսի բացատրու-  
թիւնն . ինչո՞ւ զանանք այս տիրողոսն  
նորան տալու , « Որ եկած է յաշխարհ  
ճշմարտութեանն վրայելու » :

Ճշմարտութեանն կ'ասեմ , որ 'ի վեր  
է քան զիւթ , վասն զի մտածութիւն է .  
'ի վեր է քան զմտածութիւն , վասն զի  
մտածութեան օրէ'կքն է . 'ի վեր է քան  
զկարծիս . վասն զի կարծեաց դատա-  
ւորն է , 'ի վեր է քան զկամս . վասն զի  
կամայ կանոնն է : Ճշմարտութեան կա-  
սեմ , բայց ոչ թէ մի որ և իցէ մաս-  
նաւոր ճշմարտութեան . այլ նոյն իսկ  
ճշմարտութեան , ճշմարտութեանն  
Աստուծոյ , ճշմարտութեանն որ արա-  
բածոյն իւր Արարչին հետ ունեցած  
յարաբերութեանն կը վերաբերի , ճրչ-  
մարտութեանն , որ մարդկային բուն

կենաց և վախճանին կը վերաբերի , ճրչ-  
մարտութեանն , որ ամեն ճշմարտու-  
թիւններ յինքն կը բովանդակէ և ա-  
մեն ճշմարտութիւններէ տեւական է  
եւ անմահ , և որ միայն է համապա-  
տասխան ամեն յաւիտենական ստու-  
գութեանց և իրականութեանց : Նա ,  
որ այն ճշմարտութիւնն իւր անհուն  
ընդարձակութեամբ յինքն կը բովան-  
դակէր , եւ նորս մէջ կ'ապրէր . նա ,  
որ մի անձնաւորութիւն կը կազմէր  
նոյն ճշմարտութեան հետ եւ սասց  
իւր աշակերաններուն . « Ես եմ ճշմար-  
տութիւնն » , նա Թագաւոր էր , թէ ոչ :

Նորա Թագաւորութիւնն 'ի վեր  
էր արդեօք ամեն բանէ , ինչ որ  
Թագաւոր անունն կարող է կրել  
երկիրս վերայ : Եւ եթէ Թագաւո-  
րէն Թագաւորութիւն կ'ենթա-  
գրէ և հպատակներ . միթէ այս հը-  
պատակներն եւ Թագաւորութիւնն  
կը պակասեցնեն Յիսուս Քրիստոսին :  
« Ամենայն , որ 'ի ճշմարտութենէ է ,  
լսէ բարբառոց իմոյ » : Ահա տէրու-



Թիւն առաւել բացարձակ եւ միա-  
հեծան քան Վեսարներու կայսերու-  
Թիւնն, առաւել խոր՝ քան հանձարոյ  
տիրապետութիւնն: Ով որ Յիսուսի  
ձայնն կը լսէ, իւր բովանդակ կեանքն  
նորան կը հպատակեցնէ, նորան կը հը-  
նազանդի ամենայն հնազանդութեամբ  
և պաշտելով զնա ՚ի վեր կը դասէ քան  
զամենայն իշխանութիւնս և քան զա-  
մենայն պետութիւնս և կրնդունի, որ  
անասման իրաւունք ունի նա ոչ մի-  
այն իւր կենաց, այլ և իւր ներքին է-  
ութեան վերայ: Հաստատուած է ու-  
րեմն նորա թագաւորութիւնն: Գուք  
ինքնին դատեցէք. «Նա թագաւոր է,  
նա ծնուած է թագաւորութեան հա-  
մար»: Ի խորս աստուածային էութեան  
յաւիտենական Բան Աստուծոյ,  
Բան անընդհատ ճառագայթեալ ՚ի ծո-  
ցոյ Հօր, Բան, որ կոչումն ունէր ՚ի  
յաւիտենից տիեզերաց մէջ ցոլացնել  
Աստուծոյ լոյսն և հնչեցնել իւր իմաս-  
տութիւնն, այս աստուածային Բանն  
նշանակուած էր զահու համար, եւ

այս դահն բարձրանալու համար էր,  
որ նա ՚ի յաւիտենականութենէ ՚ի ժա-  
մանակաւորն իջանելով ծնաւ իբրեւ  
մարդ և մարդկանց մէջ շրջեցաւ: Յա-  
ւիտենականութենէն իջաւ բարձրա-  
նալ ՚ի դահ, նաև ՚ի խաշ, վասն զի նա  
յաշխարհ եկաւ ոչ միայն ճշմարտու-  
թիւնն հռչակելու, այլ նաեւ ճշմարտու-  
թեանն վայելլու համար: Մեծ ճշմար-  
տութիւնն, որոյ համառօտութիւնն է  
անձնուիրութիւն, նա կնքեց զայն իւր  
անձն նուիրելով: Մնուած էր նա թա-  
գաւորութեան համար և այն թագա-  
ւորութիւնն ստացաւ ոչ միայն իբրեւ  
ժառանգութիւն, այլ իբրեւ յաղթա-  
նակ իւր վիրայութեան: Ահա այս պատ-  
ճառաւ սոյն հօր թագաւորն բնդ ա-  
ռաջ ելանելով վրէժխնդրութեան,  
կ'արտասանէ թագաւոր բառն, որով  
զինքն չարչարանաց պիտի մատնեն, յօ-  
ժարակամ կը վկայէ ճշմարտութեանն  
և այսոյէս կրկնակի հիմամբ կը հաս-  
տատէ իւր թագաւորութիւնն, թէ  
փառօք ծննդեան եւ թէ փառօք



մարտիրոսութեան , Տէս , տես ուրեւ  
մին , սկ Պիղատոս , թէ ճշմարտապէս  
թագաւոր է արդեօք քո հանդէպ  
կանգնած մարդն , թէ ոչ : Բայց ի՞նչ  
պէս կարող ես դու տեսնել : Գու մին  
չեւ անգամ չես հաւատար ճշմարտու  
թեան գոյութեանն : « Զի՞նչ է ճշմար  
տութիւն » կը հարցանես դու : — Զի՞նչ  
է ճշմարտութիւնն : Մեծ խօսք իւր  
տեսակին մէջ , համեմատելովքեզ հետ  
խօսակցող աստուածային անձի խօսքե  
րուն հետ : Ա՛յլ Պիղատոս , մարդկու  
թեան մեծ մասն քո բերանով կը խօ  
սի . « Զի՞նչ է ճշմարտութիւնն » :  
Այս է բարբառ ներկայ դարուս :

Յիսուսի Քրիստոսի խօսքերն հաս  
կացանք . Յիսուան ճանաչեցինք . աչ  
խատինք ճանաչել այժմ զՊիղատոս :  
Երբ կ'արտասանէ Պիղատոս թէ . « Զի՞նչ  
ճշմարտութիւնն » ամենեւին դիտա  
ւորութիւն չունի ուրանալ և արհա  
մարհել ամեն ճշմարտութիւն : Իբրև  
աշխարհի մարդ , իբրև պաշտօնպետք

մարդ , նա գիտէ , որ կան մարդկանց  
համար հասկանալի ճշմարտութիւն  
ներ և գիտէ թէ ի՞նչ արժէք ունին  
սոյն ճշմարտութիւններն : Նա ականջ  
գրաւ Յիսուսին ( եւ քանի՞ քա  
նի՞ մարդիկ նորա հետ ) որ կը քա  
րողէր այն երկրորդական ճշմարտու  
թիւններէն մի քանիսն , որք մեր ան  
ցաւոր կենաց կը վերաբերին : Այսպի  
սի ճշմարտութիւններն , Պիղատոսէն  
ոչ առաջ և ոչ յետոյ , մարդկային ազ  
գին անհաճոյ չ'են երեւցած : Այսօր  
խսկ միշտ ծարաւի են մարդիկ այս ճըշ  
մարտութեանց և անխոնջ կ'որոնեն :  
Թէ քանի՞ քանի ջանքեր եւ զոհողու  
թիւններ 'ի գործ կը գնեն այս օգտա  
կար ճշմարտութիւններն ստանալու  
համար , զարմացան անժանի է : Ան  
ցաւոր կենաց վերաբերեալ ճշմարտու  
թիւններն այսպէս անյազութեամբ կ'ո  
րոնուին : Այս կէտէն զննելով՝ աշխար  
հըս գողցէս գրկած է Աւետարանի  
այս խօսքն որ կ'ասէ . լայն է դուռն և  
և ընդարձակ ճանապարհն , որ տանի



ի կորուստ . և անձուկ է դուռն , որ է ճանապարհ կենաց :

Պիղատոսի արհարմարհանքն մեծ ճշմարտութեան , կրօնական ճշմարտութեան համար է : Նա լաւ կը հասկանայ , որ Յիսուս այս ճշմարտութեան համար կամի խօսիլ . ուստի և կը սատասխանէ . ուր է այս ճշմարտութիւնը և ի՞նչ կամի , որ անե՞ք այս ճշմարտութիւնն :

Ամեն կրօնական կուտակցութիւններէ , բաժանումներէ և նաեւ համազրումներէ արտաքոյ մէկ անորիչ և խտրան դաշտի վերայ , որ անտարբերութիւն կ'անուանի , կան մի դասակարգ մարդիկ , որոց համար այսպիսի հարցումներն ու զբաղումներն բոլորովին օտարտի կ'երեւին , և ինքեանք խի օտարտի են մարդկային տեսակին մէջ . վասն զի ոչ իրենց բնաւորութիւնն որոշող յատուկ զգացողութիւններ ունին , ոչ ատելութիւն կամ սէր կըզգան կրօնի համար , և ոչ երկիւղ կամ ցանկութիւն ունին կրօնի նկատմամբ : Կան

նոցա շուրջն մի կարգ մարդիկ եւս , որք նոցա նման դէպ ՚ի յերկիր խոնարհեալ և երկրայիններով զբաղեալ մէրթ ընդ մէրթ կանգ կ'աւնուն , առ վայր մի կ'ընդհատեն իրենց երկրաւոր աշխատանքն , և յանկարծական մտածութեամբ ըմբռնեալ , մի երկչոտ նայուած կը ձգեն դէպ ՚ի երկինք և կը հարցանեն ինքնին . — Յս , որ կըզգամ թէ կ'ապրիմ . ես , որ սկսած եմ դոյութիւն ունենալ . ես , որ սոյն օրէն երեսուն կամ քառասուն տարի յաւաջ չը կայի երկրիս վերայ և սակաւ տարիներէն զինի դարձեալ պիտի չը լինիմ . ես որ կը ճանաչեմ , թէ էական տարբերութիւն կայ բարւոյն և չարին մէջ , ինչպէս սեւին և սպիտակին մէջ , եւ այս տարբերութեան ազդեցութեամբ կըզգամ , որ մի ուրիշ աշխարհի կը պատկանիմ ես , քան թէ այս դոյներու և ձեւերու աշխարհին . ես , կասեմ , էակս բանական , բարոյական և պատասխանատու , ես՝ ուստի՞ ելած եմ և ո՞ւր կ'երթամ : — Երկրորդներն



այսպէս կը խօսին ահա . իսկ առաջիններն ընդհակառակն այնպէս կը կարծեն , որ իրենց կեանքն սահմանափակուած է միայն ծննդեան և մահուան մէջ , իրենց արժանաւորութիւնն կը կայանայ 'ի մէջ երկուց սահմանաց վատանունութեան եւ մարդկային փառաց , իրենց երջանկութիւնն կը գտնուի այն հորիզոնին մէջ , որոյ եզրերն են մի կողմէն բնութիւնն և միւս կողմէն երկրաւոր յօժարութիւններն , սոքա անխառն և անսասան յառաջ կը դիմեն մի անդունդէ , որոյ վերայ յիշողութիւն չունին , դէպ 'ի միւս անդունդն , որոյ վերայ գիտութիւն չ'ունին , և այնպէս վստահ են , որ գոգքէս իրենց ընթացած ճանապարհն յաւիտենական է կամ իբրեւ թէ իւրաքանչիւր առաւօտ իրենց մտաց համար մի անանց սահման է : Երբ մեզուն իւր բջիջներն կը ծրագրէ և կը պատրաստէ . երբ մրջիւնն իւր ամբարներն կը փորէ , պիտի կարծուի ուրեմն , որ զբարձրած են մի վերին աշխարհի և մի ասպագոյ

կենաց համար : Անցաւոր բաներով պարագողներն մարդկային բնութեան ամենէն ազնիւ տարրն , որ է նորա կըրօնական զգացումն , առ ոտն կը կոխեն անցաւոր ուրախութեանց և կենաց հոգսերու մէջ և 'ի վերջոյ բոլորովն անտես կը լինի մարդոյ աչքէն և կը մոռացուի : Մարդն կը դործէ ոչ իբրեւ մարդ , այլ իբրեւ մեղու եւ մրջիւն :

Բայց որովհետեւ կան մարդիկ ևս , որոց համար անտես եղած չէ կրօնական զգացումն ուշարժումն , այսպիսի մարդիկ ի՛նչ կը մտածեն արդեօք , երբ կը տեսնեն , որ իրենց շուրջն կան մարդիկ , որք կը ձգտին դէպ 'ի անտեսանելին և անփոփոխն . աշխարհի մէջ են , բայց մի ուրիշ աշխարհի վերայ կը մըտածեն և կը խորհին : Արօծի զգացումով վառուած այս մարդիկներու վերայ առաջիններն չեն խօսիր , այլ կը տեսնեն և կը լռեն , և սակայն նոցա լռութիւնն մի խօսք է , և ի՛նչ է այս խօսքն : Նոքա լռելեայն մեզ կ'ասեն ,



— Կրօնասէր մարդիկն իրենց բնութեանէն տարբեր մարդիկ են , առանձին ճաշակ ունին . կրօնասիրութենէն հաճութիւն կրողքան , առանձին ճանապարհ ունին և այնպէս կրնթմանան . մենք չենք պատարակեր , թող սիրեն կրօնքն : Իսկ մեր ոչ ժամանակ ունինք և ոչ կարօտութիւն կրողքամք նոցա հետեւելու . հետեւապէս կրօնքն մեզ չը վերաբերիր : Երբ Հրէայք իրենց օրէնքէն վկայութիւն կը բերէին , Պիղատոս կ'ասէր . « Միթէ ես Հրէայ եմ » : Այսպէս կ'ասեն ճիշդ նաեւ լուսնատարբերներն , միթէ մենք կրօնասէրէն եմք . բայց չեն գիտեր , որ սոյն խօսքէն այս հետեւութիւնն կ'երևէ . — միթէ մեր մարդ եմք : Իւրաքանչիւրս մեր ճանապարհն երթմանք , կը յարեն նոքա , բաւական է , որ իրարու վրաս չը պատճառենք : Կարեւոր խնդիրն այն չէ , որ մենք սերիշ բան կը մտածենք , նոքա ուրիշ , այլ այն է , որ իրարու խափան չը լինինք և կամ վրաս պատճառենք : Ժամանակն կարճ է , վայր

կեաններն սախաղական , գործքերն շատ , թող իւրաքանչիւրս մեր գործն յառաջ տանենք . թող նոքա արգելք չը լինին մեզ , և մեր բնաւ արգելք չենք լինիր նոցա . կ'ուզեն գործեն , կ'ուզեն ոչ :

Արչափ հարցումներ որ առաջարկենք այսպիսի մարդկանց , որչափ որ հետամուտ լինինք , պիտի ատենենք , որ նոքա չը գիտեն թէ ի՞նչ է ճշմարտութիւնն . և եթէ շատ ստիպենք , պիտի պատասխանեն , որ այսչափ միայն գիտեն , թէ չը կայ ճշմարտութիւն . և պիտի պատասխանեն այսպէս :

« Ինչ և լինի ճշմարտութիւնն , ամենեւին յարաբերութիւն չունի իրական կենաց հետ : Առանց ճշմարտութեան կարող է մարդ հարստանալ , պատուոյ հասնիլ , մեծ լինիլ յաջ մարդկան և առհասարակ կանոնաւորել իւր ընթացքն , ինչպէս որ պետք է : Ճանապարհն գծուած է . ուղին հարթ . աշխարհի պէս հին մի քանի սկզբունք



ներ բաւական են մարդոյն իւր գործ-  
քերն անօրինելու, միայն թէ կարողա-  
նայ ըստ տեղւոյն և ըստ պարագային  
ի կիր առնուլ և իւր վիճակին յարմար-  
ցնել: Մտաց մեծամեծ զննութիւն-  
ներն ու վարդապետութիւններն եւ  
ոչ մի համեմատութիւն ունին սովը-  
րական կենաց խնդիրներու հետ, այլ  
չստ անգամ օտարօտի են և ներհակ =  
Ի՞նչ են զննութեան սովորական հե-  
տեւանքներն, եթէ ոչ շիտթութիւն,  
տարակոյս և տագնապ մտաց: Եթէ  
ճշմարիտ է, որ մահուան վերայ խօսա-  
լըն ապրելէ կ'արգելու, ևս առաւել  
ճշմարիտ է, որ Աստուծոյ վերայ խօս-  
հին գործելէ կ'արգելու:

«Գիցուք թէ կրօնական ճշմարտու-  
թիւնն փոխանակ վնասելու օգտակար  
ևս ըինէր. միթէ հարկ կ'ար զայն գըտ-  
նելու, և ո՞վ գտած է մինչեւ ցարդ: =  
Ոմանք կը պարծին եւ կը փքանան,  
թող բարեաւ վայելէն իրենց հաճելի  
երազներն, մենք չենք բառնար իրենց  
հաճոյքն, և ոչ կը մասնակցինք. վասն

զի մենք չենք հաւատար նաեւ, որ  
ճշմարտութիւնն զիւրամատոյց լինի =  
Մի ապացոյցն մեզ բաւական է = Ահա  
մի կողմէն կան մարդիկ, որ ճշմարտու-  
թիւնն միայն այս ինչ կարծեաց մէջ կը  
տեսնեն, եւ ահա միւս կողմէն կան  
մարդիկ, որ այն ինչ կարծեաց մէջ կը  
տեսնեն, և այնպէս համոզուած են =  
Ո՞ր կողմն է ճշմարտութիւնն. մեք չը  
գիտեմք, բայց միայն կը տեսնեմք, որ  
զմարդ կարող է հաւասարապէս հա-  
մոզուած լինիլ ինչպէս ստութեան,  
նոյնպէս և ճշմարտութեան մէջ: Եթէ  
ճշմարտութիւն երեւէր երկրիս վերայ,  
պէտք էր, որ տիրէր ամեն մարդոյ մը-  
տաց վերայ: Բայց քանի որ տիրած չէ,  
մենք չենք կարող հաւատալ նորա ներ-  
կայութեանն. միակ ճշմարտութիւնն  
համոզումներն են: Մարդ ինչ բանի  
որ կը հաւատայ, իւր ճշմարտութիւ-  
նըն այն է, այս է ահա միակ իրական-  
նըն: Լաւ է, որ իւրաքանչիւր մարդ  
իւր համոզումն ամուր բռնէ և ըստ  
այնմ իւր կեանքն անօրինէ: Մէք կա-



քող եմք ասել, որ մեր համոզման հա-  
մեմատ մեր կեանքն կը անօրինենք, ար-  
համարհելով այն խուզարկութիւննե-  
րն, որք աւելորդ կ'երեւին մեզ. և  
ահա ըստ մեր դատողութեան մենք  
եւս ճշմարտութեան մէջ եմք :

« Իրաւ է, որ մեր շուրջն կրօնա-  
կան իրողութիւններ շատ կան, որք եր-  
կար ժամանակէն ՚ի վեր սովորական ե-  
ղած են մեր բնական երկրին մէջ, եւ  
մեք պատշաճ կը դատիմք արտաբուստ  
միայն յարմարիլ այս սովորութեանց և  
այս դժուարին բան չէ : Մեր չենք ու-  
ղեր բնաւ ոչ մեր և ոչ աշխարհի հան-  
դրատութիւնն խռովել մի պարզ դա-  
ղափարի համար : Ոչ մեր կարծեաց  
վերայ համոզուած եմք եւ ոչ այլոց .  
մեք կարծիք եւս չունինք բնաւ : Մեր  
չեմք ուղեր յառաջամարտիկ վնիլ մի  
կարծեաց համար և առ այս դիմադ-  
րաւել ՚ի մարտիրոսութիւն : Ճշմար-  
տապէս ամենէն մեծ աստուածսիրու-  
թիւնն ու փիլիսոփայութիւնն այն է, որ  
հետեւեմք այն սովորութեանց, որոց

մինչև ցարդ հետեւած են. և այսպէս  
ահա օրհնել կը տանք մեր ամուսնու-  
թիւններն, մկրտել կը տանք մեր դա-  
ւաններն, թաղել կը տանք մեր ննջե-  
ցեալներն, հետեւելով այն եկեղեցւոյ  
արարողութեանց, որոց մէջ ճնուած  
եմք : Այս եղանակն եթէ օգուտ չ'ու-  
նի, վնաս եւս չ'ունի բնաւ. կամ ա-  
ւելի լաւ է ասել, օգուտ ունի, որով-  
հետեւ այլոց խազաղութիւնն չը խր-  
ւումք :

« Ինչպէս կարելի է չընշմարել, որ  
ամեն պատահմանց մէջ մեր այս դը-  
րութիւնն օգտաւէտ է : Այն մարդի-  
կն, որոնք որ և իցէ մասնաւոր հա-  
մոզումն կ'ընդունին կրօնական նիւթոց  
նկատմամբ, յայտնապէս կը դիմէն դէս  
՚ի վտանգ : Եթէ լաւ ճանապարհի  
վերայ են, լաւ է, եւ դուք կ'ասէք  
թէ՛ ահա վրկուած են, և մեք կը հա-  
ւանիմք. իսկ եթէ վատ ճանապարհի  
վերայ են, կ'ասէք թէ՛ ահա կորսուած  
են : Արդ ինչպէս առաջիններն լա-  
համոզուած չէին, նոյնպէս և վերջին



ներն: Ուրեմն երկոքեան ևս շփոթ խաղ  
 մի խաղաղցին: Պէտք է, որ մէք աւելի  
 խոհեմ եւ աւելի իմաստուն լինիմք:  
 Պէտք է, որ այս երկու վտանգաւոր  
 ճանապարհի մէջ տեղէն ընթանամք:  
 Ճշմարիտ է որ կարող չեն ճշմարտու  
 թեան բարեկամաց մէջ հաշուել զմեզ,  
 եթէ կայ ճշմարտութիւն, բայց աւելի  
 ճշմարիտ է, որ թշնամեաց մէջ եւս  
 կարող չեն հաշուել: Մէք անտարբեր  
 եմք և այս բառն միայն իսկապէս ցոյց  
 կը տայ մեր կացութեան վսեմութիւնն:  
 Անտարբերութիւն բառն իսկ մեզ պէս  
 անտարբեր է. իրաւ է փայլուն չէ,  
 բայց գոնէ ապահով է:

«Ամենէն լաւն այս է, որ մեր նմա  
 նեաց մէջ ոչ որ կարող չէ գանգատիլ.  
 վասն զի մէք և ոչ մի կուսակցութեան  
 բարեկամ եմք, այլ բարեկամ եմք ամե  
 նուն: Իւրաքանչիւր կարծիք անպատ  
 ճառ հակառակ է մի այլ կարծեաց:  
 Մէք, որ ամենեւին կարծիք չունիմք,  
 կարող չեմք ոչ թշնամի լինիլ այրոյ,  
 և ոչ այրոյ թշնամութիւնն գրգռել

մեր վերայ: Շատ փափագելի էր,  
 մարդկային ազգի խաղաղութեան հա  
 մար, որ բոլոր աշխարհ մեզ նման ան  
 տարբեր լինէր. բայց գիտեմք, որ այս  
 անկարելի է. թող ուրեմն իւրաքան  
 չիւր որ իւր համոզման հետեւի. եւ  
 թող ներեն մեզ, որ մէք բնաւ համու  
 զումն չունիմք»:

Այսպէս է ահա Պիղատոսի և ա  
 մեն անտարբերներու մտածութիւնն,  
 որ իւր խոնձարուրն պատուելով եւ  
 յերեւան գալով արձակ համարձակ  
 կը քարոզուի: Քննեմք ուրեմն ուշա  
 դրութեամբ, և ապա անշուշտ կարող  
 եմք գատել, թէ արդեօք անտարբեր  
 յատկութիւնն իրապէս մի անտարբեր  
 կացութիւնն է, թէ ոչ:

Ի՞նչ ասելու է այն անտարբերնե  
 րուն, որք պատճառ կը բերեն իբր թէ  
 ճշմարտութիւնն եւ ոչ մի աշխար  
 հային կամ ժամանակաւոր օգուտ ու  
 նի. — Ոչ ինչ: Վասն զի սոյնպիսի ըս  
 կրդեան վերայ հիմնուած անտարբե  
 րութիւնն շատ և շատ մօտ է ավշու



Թեան և անսանութեան : Եթէ ճըշ  
մարտութիւնն , երկրիս վերայ տագ-  
նապի եւ վտանգի առիթ իսկ լինէր  
այն մարգկանց համար , որք զայն կ'ու-  
րանեն . եթէ սուտ իսկ լինէր Սուրբ  
Գրոց ասածն թէ՛ բարեպաշտութիւ-  
նըն խոտամուկներ ունի թէ՛ ներկայ  
և թէ՛ սպագայ կենաց համար . այնու  
ամենայնիւ ակնբեւ յայտնի է , որ  
մարմինն ոչ ինչ է հոգւոյ համեմա-  
տութեամբ , ժամանակն՝ յաւիտե-  
նականութեան . վասն զի մեր ճըշ  
մարիտ կեանքն Աստուծոյ մէջ ծած-  
կուած է . վասն զի Աստուած է մի-  
այն մեր սկիզբն , մեր վախճանն և  
մեր էական նպատակի լրումն և կա-  
տարածն : Եւ հետեւաբար ով որ  
կը վճռէ ապրիլ առանց Աստուծոյ և  
առանց յուսոյ , այսպիսի աշխարհի մէջ  
զոր վաղն պիտի իտպաութիողու և եւ-  
նէ , այնպիսին ինքնին արտաքս կ'ելա-  
նէ ոչ միայն մարդկային բանականու-  
թեան , այլ նա եւ մարգկային բնու-  
թեան ամեն արայմաններէն : Այսպիսի

անտարբերներուն որչափ որ ճշմար-  
տութիւն քարոզենք , պիտի մերժեն .  
ուստի եւ այս ծայրայեղ յիմարու-  
թեան դատաստանն Աստուծոյ կը թու-  
զուենք :

Խօսի՞նք արդեօք այն անտարբեր-  
ներուն վերայ , որք իրենց անտարբե-  
րութիւնն իմաստութիւն համարած  
են , պատճառելով թէ՛ մարդն կարող  
չէ ճշմարտութիւնն գտնել : Ի՞նչ խօ-  
սինք , եղբարք , այսպիսեաց վերայ , ու-  
րոց թեթեւամտութիւնն կշտամբա-  
նաց արժանի է , ինչպէս եւ առաջնոց  
անանական ափշութիւնն : Ի՞նչ կ'ու-  
զեն ասել , ճշմարտութիւնն անմատ-  
չելի և անգտանելի քարոզելով , եթէ  
ոչ կարծել , թէ Աստուած , որ առա-  
սօրէն հոգացած է մեր մարմնաւոր  
պիտոյքն , ամենեւին ինամբ չունի մեր  
բարոյական պիտոյից համար : Փոխա-  
նակ այսպիսի թշնամանքներ տեղալու  
Աստուծոյ դէմ , աւելի լաւ չը լինիք  
ուղղակի ասել , որ մարդն չը ճանաչէր  
ճշմարտութիւնն , վասն զի չուղեր ճա-



նաեղ, ոչ թէ ճշմարտութիւնն է, որ անմատոց է, այլ մարդոց կամքն է, որ չուղեր մօտենալ: Միթէ չե՞ն տեսներ եւ չեն գիտեր, որ հաստատամտութեամբ ճշմարտութիւն որոնողն, ճրջմարտութիւն որոնելով՝ մեռնողն, աւելի մօտ է ճշմարտութեան, աւելի ճշմարտութեան մէջ է, և աւելի սիրելի է յաչս Ստուծոյ, քան այն մարդըն, որ ամենեւին չ'որոնէր ճշմարտութիւնն: Ի՞նչպէս չեն տեսներ, որ եթէ մեր բուն վախճանն է ճշմարտութիւնն ժառանգել, ուրեմն նա, որ անխոնջ ճշմարտութիւն կ'որոնէ, իրեն համար սահմանուած նպատակին կը ծառայէ երկրիս վերայ:

Նոքա կ'ասեն, որ յուսահատուած են. բայց սրչափ աշխատեցան արդեօք, սրչափ ժամանակ գործ դրին ճշմարտութիւն որոնելու համար: Ի՞նչ աւաստարանք. ի՞նչ շուտափոյթ յուսահատութիւն. ի՞նչ վաղվաղիտ վճիռ: Նոքա կ'ասեն թէ. «Աշխարհս համաձայն չէ ճշմարտութեան հետ. ու-

րեմն չը կայ ճշմարտութիւն: Սաստիկ հաւատալն՝ սաստիկ հակասական համոզումներ ունի իրեն մէջ. ուրեմն անկարելի է վստահիլ և ոչ մի համոզման:»

Ո՞չ ապաքէն, եթէ ահանջ դնենք, պիտի ասեն նորս՝ թէ աշխարհի մէջ շատ բաներ կան, որք առաջին անգամ ստոյգ կ'երեւին, բայց այնպէս չեն: Ո՞չ ապաքէն մեծամեծ ճշմարտութիւններն միշտ ընդ դիմախօսներ ունեցած են ՚ի սկզբան: Ո՞չ ապաքէն, բարձրագոյն կեանէն նայելով, ճշմարտութեան միակ օրէնքն է ճանապարհ բանալ իրեն համար հազարաւոր խոչընդոտներու մէջէն: Անտարբերներն կ'ընդունին, որ այս այսպէս է և պատիւ կը համարին սոյն կարեւորութիւնն ընդունիլ. բայց ի՞նչպէս, մի միայն արտաքին գիտութեան և գիւտերու համար: Նոքա կը պարծին թէ սրչափ սուղնստած են իրենց համոզումներն, քանի՛ աշխատանք, քանի՛ ջանք: Նոցա համար ամեն կերպով անտարբերութիւնն անարգ է, բայց ո՞չ Կրօնի նը-



կատմամբ: Նորա կը ծաղրէին անշուշտ  
 եթէ մէկն երէր և ջանար յետ դար-  
 ձնել այն հետապօսութիւններէն, այն  
 որոնումներէն, որք իրենց բազդին կամ  
 ունայնասիրութեան կը վերաբերին: Նաև  
 իփստ վերացական և մթին գի-  
 տութեանց նկատմամբ նորա դարձեալ  
 կը յուսան լոյս ստանալ. շատ անգամ  
 կը պարծին իսկ թէ ստացած են, մե-  
 ծաւ պնդութեամբ կը պաշտպանեն ի-  
 ընեց հաւանական գիւտերն, և հաւա-  
 քաբանութեան սուսերով կը մաքառին  
 իրենց հակառակորդաց հետ: Քայց երբ  
 Արծիքն կը ներկայանայ նոցա պարզ և  
 համեստ պատմութեան կերպարանաւ,  
 երբ սոյն Արծիի պատմութիւնն, ուսումն  
 ու պատուէրներն պարունակուած կը  
 տեսնուի մի փոքրիկ գրքի մէջ (Աւե-  
 տարանի) որոյ մեծութեամբ ուրիշ  
 մի գիրք անյագ հետաքրքրութեամբ  
 կը կարգանք մի օրուան մէջ. երբ սոյն  
 Գիրքն (Աւետարանն), որ բաց է ամե-  
 նուն առջեւ, լաւ կարդացուելու եւ  
 հասկացուելու համար ուրիշ բան չը

պահանջէր, բայց միայն արթուն խիղճ,  
 առողջ բանականութիւն, ուղիղ սիրտ  
 և ամիտփ միտք. երբ Արծին որ և իցէ  
 գիտութենէ աւելի կարճատեւ պա-  
 քապմամբ եւ անկնճիւռ ուսմամբ կը  
 տայ մեզ խաղաղութիւն հոգւոյ, սրբ  
 բութիւն կենաց և յոյս ՚ի մահուան.  
 երբ սցալէս կը ներկայանայ Քրիստոս  
 նէական Արծին, ընդհակառակն ան-  
 տարբերներն կը դանգատեն, որ ամեն  
 ջանք ունայն է, ամեն յարատեւութիւն  
 անկարելի. կը դանգատեն և կ'ափսո-  
 սան իրենց թանկագին վայրկեաններն  
 ՚ի զւր գործադրելու համար, և աւանդ  
 այն մարդն, որ մի ծաղիկ քննելու հա-  
 մար, մի ձանձի թռիչ զննելու համար,  
 մի պատկերի յաստիպօծեր դիտելու  
 համար երկար օրեր և գիշերներ կը զւ-  
 հէ, այն մարդն ստիպով յետ կը բա-  
 շուի Արծիի սւամանքէն, իբրեւ մի ան-  
 մատչելի դժուարութենէ:

Երբ կը տեսնեմք թէ մարդիկ ո՞ր  
 չափ սակաւ ժամանակ կը զոհեն եւ  
 դոյզն ուշադրութիւն կը դարձնեն Ար-



րծնական ուսմանց և ճշմարտութեանց համար կը սոսկամ. ոչ մի բանի վերայ այնպէս թեթեւակի չը նայուիր, ինչպէս Կրօնի վերայ: Բայց մեր կշտամբանքն այս թեթեւութեան համար չէ և անտարբերներու անտարբերութեան բուն արմատն ևս այս թեթեւութեան մէջ չէ: Կայ մի աւելի հաստատ հիմն նոցա անտարբերութեան: Թէպէտ անտարբերներն բացարձակ չեն ասեր, բայց պէտք է որ մի աւելի մեծ պատճառ ունենան Աւետարանէն հեռի մը նալու մասին: Արդեօք չը գիտէն իրենք այս պատճառն, որ չեն յայտներ. ո՛չ. գիտեն և այն պատճառաւ չեն յայտներ: Արդեօք սխալ գատած են, որ չեն յայտներ. ո՛չ. այլ այն ազագաւ չեն յայտներ, որ կասկած ունին թէ ճշմարիտ է: Անշուշտ բան մի նշմարած են, յորմէ կը խուսեն և յետս կը մղուին: Մի՞ դուցէ, այն արեգակն, որ նոցա աչաց առջեւէն անցեր է, խուսելու ժամանակ, նոցա դոյութեան կամ կենաց վերայ լոյս մի ճառագայթած է, յորմէ

կը սոսկան նոքա: Բայց ո՛չ ապաքէն, եղբարք, Աւետարանն է լուր և բարբառ աւետեաց, Աւետարանն է պատգամ գթութեան և թողութեան, Աւետարանն է յայտարարութիւն անհուն սիրոյ, որ կամի, ամեն մարդոյ համար, անցեալն ներել, ներկայն մըխիթարել, ապագայն ապահովել: Կարող են վարանիլ հաւատալու մի այսպէսի առաւելողանց և անհուն բարութեան վերայ. բայց այնու ամենայնիւ, կը տեսնենք, որ Աւետարանն զբուսելու համար պատրաստուած է և ո՛չ վախճանելու կամ տարամերժելու: Արդ՝ այս սէրն, այս ներողութիւնն ու թողութիւնն է, որ կը զարհուրեցնէ անտարբերներն:

Այն օրէն ՚ի վեր, որ Աւետարանն ձրի փրկութիւն կը քարոզէ, այս քաւրոզն, այս ձրի փրկութեան պարզեւն իւրաքանչիւր մարդոյ կենաց մէջ տաղնապ կը պատճառէ, և տարբեր բնաւորութեանց համեմատ տարբեր տըպաւորութիւններ կ'անէ: Եթէ այն



ժամուն կը հնչի մեր ականջին ձրի փրջը կու թեան աւետիքն կամ Ենորհոյ բարբառն, երբ կշտամբուած ենք մեր խղճմտանքէն, յուսով կ'ընդունուի մեր հոգւոյ մէջ նոյն բարբառն, որ կը բաջարէրէ զմեզ և կը մխիթարէ : Եթէ այն ժամուն կը հնչի, երբ անվրդով նստած ենք և մեծ վատահուծիւն ունինք մեր անձնական արդարութեան վերայ, Ենորհոյ խիտն կը բառնայ նոյն վատահուծիւնն, ինքն նորա տեղն գրբաւելլաւ համար : Փոխանակ ճոխացը ներջ կը կողպտէ զմեզ • փոխանակ բարձրացնելը կը խոնարհեցնէ և կը սխի երեկեան արդարէն վաղուեան մեղաւոր առնել : Նա, որ զինքն արգար կը կարծէր, երբ Ենորհոյ կը ցոլանայ՝ կը զգայ, որ մեղաւոր է : Երբ Ենորհոյ կը ճառագայթի մեր մէջ, կը բառնայ մեր կարծեցեալ աղատութիւնն, որ գերութենէ վատ էր, կը յեղաջջէ մեր ընթացքն եւ կը կապէ Աստուծոյ հետ այնպիսի եղանակաւ, որ այլ եւս մեզ չենք պատկանիր : Ենորհոյ մի սուրբ

բռնութեամբ կ'ընկրիէ զմեզ դէպ ՚ի իւր օրէնքն, զթութեան և թողութեան ճանապարհաւ : Ենորհոյ աշխարհէն կը խլէ զմեզ՝ Աստուծոյ հետ կապելու համար : Միով բանիւ, Ենորհոյ խիտ սուկալի հարուած կը տայ մեր հպարտութեանն ու ինքնատիրութեանն : Հոգին այսպէս կը դատէ առաջին նայուածքով թայց սոյն առաջին նայուածքին երկրորդն այն ժամանակ կը յաջորդէ, երբ անմիջապէս կը բռնագատուի առ այն շնորհիւն Աստուծոյ, կամ այնպիսի մի պարագայիւ, զոր Աստուած կը տնօրինէ գթութեամբ : Ետ ճշմարտ է, որ մարդկանց մեծ մասին համար, Աւետարանն ( Աւետեաց լուրն ) ստեփան տպաւորութիւն կ'անէ : Սոյն ստեփանն, որ անտրոշ է և հազիւ նշմարելի, այն ժամանակ միայն բացորոշ կը ճանաչուի, երբ մի աւելի ճիշդ հայեացք կը գայ լուսաւորել նոյն տպաւորութիւնն : Կան շատերն, որք առաջին նայուածքով կը սխիսն առել : Կան այլք, որք տպաւորութեան հարեւանցի տեսութենէն



խորտելով՝ իսկոյն յետ կը դառնան, կը  
խուսեն երկրորդ տեսութենէ, միւսանւ  
գամ ամենեւին չեն մտածեր, և այ-  
նուհետեւ աւելի ևս կը խորատուղին  
աշխարհային վայելչութեանց մէջ, ան-  
դորը բոլորովին, թէպէտ և յղացած  
ապագայ թախծութեան սերմով, կը  
դասին ինքնին ՚ի դասս անտարբերաց :

Այսպէս է ահա անտարբերներու  
բնաւորական նկարագիրն. նոքա չեն ա-  
տեր Արօնն, բայց ասելու թեան սահ-  
մանին սյնչափ մօտ են, որ բաժանա-  
րար միջոցն հազիւ թէ կը նշմարուի :  
Իւրաքանչիւր կրօնական անտարբեր՝  
թշնամութե գրօշ մի, կերպաս մի ունի,  
և դիպող առթի կը սպասէ, որ ծալքը  
բանայ և պարզէ : Ճշմարտութիւնն,  
որ ասաց. « Այժմ իմ թագաւորու-  
թիւնն այս աշխարհին չէ » հասկա-  
ցուց, որ իւր թագաւորութիւնն մի  
որ այս աշխարհէն պիտի լինի : Ճշմար-  
տութիւնն, ուր որ կ'երեւի, միշտ կը  
ձգտի դաղափարէն վտխիլ ՚ի դործ :  
Պէտք է որ դաղափարներն կերպարաւ

նախոխէ և պէտք է որ գործքերուն  
վերայ իւր կերպարանքն ու պատկերն  
դրօշմէ : Այն ժամանակ անտարբերն  
իրական գործերով պաշարուած տես-  
նելով զինքն՝ կը շարժի, կը գրգռի իւր  
անտարբերութեան մէջ : Ի զմէր էր,  
որ կամէր չեղոր լինիլ, ճշմարտութիւնն,  
որ չեղորութիւն չը սիրէր, յասպարէզ  
կը կոչէ զանտարբերն և կը ստիպէ ՚ի  
պատերազմ անընդհատ թշնամութե,  
աննիրհ ատելութեան : Գողցես կ'ասէ  
ճշմարտութիւնն. « Ո՛վ անտարբեր-  
ներ, եղէք, ինչ որ կամիք, կացէք ինչ-  
պէս կամիք, բայց իմացէք, որ աշխարհն  
պիտի փոփոխեմ ձեր շուրջն : Այն որը-  
տերն, որ ձեզ կը պատկանէին առհա-  
սարակ, յետս կը պահանջեմ : Այն  
կարգադրութիւններն, այն հաստա-  
տութիւններն, որք պիտի շփոթեն ըզ-  
ձեզ, ինձ պէտք են : Այն վերանորո-  
գութիւնն, որ ձեզ համար տաղնապ է  
և նեղորտութիւն, ինձ համար իխտո  
կարեւոր է և երբէք ձեռքէս պիտի չը  
թողում : Այն ազադակն, որ ձեր ան-



գորրու թիւնն կը վըզովէ , խիստ պիտանի է իմ նպատակին : Գուք չէք կա միր փոփոխիլ . թո՛ղ այդպէս լինի . բայց ահա՛ ամենայն ինչ կը փոփոխի ձեր շուրջն : Գուք չընպատուած էք այնպիսի իրողութեամբ , որք երբէք պիտի չք համաձայնին , չք դաշնաւորին ձեզ հետ , մինչև որ դուք ինքնին չք համաձայնիք և դաշնաւորիք նոցա հետ :— Պէտք է , եղբայրք , պէտք է մի անգամ սրոշել , երբ ճշմարտութիւնն տեսականէն գործնական կան կը դառնայ , նորա հետ կապուած գաշն , ինքնին կը լուծուի և կեզճանի : Գաղափարին կամ անասականին համար էր , որ անտարբեր էին , գործնականին համար անտարբերութենէն աւելի պիտի լինին :

Ճշմարտութիւնն ձեզ դարան լաւ բաժ չէ , բայց դարան մի կայ , յորմէ պիտի չք կարենաք խուսափիլ : Պիղատոսի օրինակի՛, ցոյց կը տայ ձեզ թէ ի՞նչ է այն դարանն , այն սրոգայթն : Երբ կ'իմանայ Պիղատոս , որ Յիսուս Քրիստոս աշխարհ եկած է միայն ճշ

մարտութեանն վիպելու համար , կեղնէ դէպի Հրէաներն և կ'ասէ . “ Ես և ոչ մի ինչ պատճառս գտանեմ 'ի նմա ” : Եւ արդարև ի՞նչ պատճառ , ի՞նչ յանցանք կարող էր դանել նորա մէջ : Ի՞նչ վնաս կամ ի՞նչ չարիք կարող է հասուցանել աշխարհին մի երազագէտ : Յիսուս երազագէտ կամ ցնորախօս կ'էրեւէր Պիղատոսի աչքին : Պիղատոսներն կամ անտարբերներն այնպէս կը կարծեցնեն , որ ամենև ին իրենց անձնական շահն չեն մտածեր , և սորա համար շուտով իրենց ձեռքերն կը լուանան և յետ կը քաշուին : Բայց այնպէս չէ՛ բնաւ , սորա մի ճարպիկ դատակարք են , որոնք զիպող ժամէն իրենց օգուտն քաղել խիստ լաւ գիտեն : Գարծուցէք աւետարանական պատմութեան թերթն և կարդայէք յաջորդ դուրսն . “ Յայնժամ ա՛ռ Պիղատոս զՅիսուս , և դան եհար ” . Եւ քանի մի տող յետոյ . “ Ասէ ցնոսա Պիղատոս . Ասէք զդա 'ի ձեզ , և ձեզէն հանէք 'ի Թաչ , զի ես 'ի դմա վնաս



ինչ ոչ գտանեմ : Կը սխալիս , Պիղա  
տաս , սուս կը խօսիս , դու որ և իցե  
յանցանք գտար սոյն մարդոց մէջ եւ  
այս է յանցանքն , որ զինքն վկայ կան  
ուանէ ճշմարտութեան , այն ճշմար  
տութեան , որ քեզ համար ոչինչ է :  
Քարոյսկանութիւնն , իրաւունքն , հա  
սարակոց շահն , աննշան բաներ չեն .  
և եթէ Յիսուս սոցա համար վկայէր  
այն խմաստով , ինչպէս դու կը հասկա  
նաս , թերեւս պաշտպանէիր : Բայց  
այժմ ի՞նչ հարկ կայ անձգ վտանգի  
մասնել , և այն մարդն պաշտպանել ,  
որ ճշմարտութեանն կը վկայէ , ճշմար  
տութեանն , որ ոչինչ է քեզ համար :  
Եթէ սոյն երազագէտն սպանուի , դու  
պիտի վշտանաս , բայց և այնպէս ի՞նչ  
հարկ կայ վտանգի ենթարկուիլ եւ  
քաղախսութիւն կամ ցնորք պաշտպա  
նելու համար : Գու ի՞նչ մեղաւոր ես ,  
Յիսուս ինքն խնդրեց և ինքն դաւա  
խար պատիժն , գու հեռացիր , շուտով  
հեռացիր , որ նորա վիճակին չը հան  
դիսպիս :

Թէեւ անկողմնասէր կը ձեւանան  
անտարբերներն , եղբարք , թէև յար  
գել կը կարծեն այլոց անկեղծ համ  
զումներն , բայց վարագուրուած վա  
տակամութի մի կայ , որ պատրաստ է  
խկոյն հեղանիլ այն մարդուն վերայ ,  
որ կը գայ նոր գաղափար քարոզել ,  
աշխարհի անդորրութիւնն վրդովել և  
կամ աշխարհի շարժումներուն ուրիշ  
ընթացք մի տալ : Ով որ սակաւ ար  
ժէք կը տայ ճշմարտութեան , սակաւ  
արժէք կը տայ նաեւ զայն որոնողնե  
րուն : Եւ ճշմարտութիւնն չը հասկա  
նալէն մինչեւ զայն պարսաւելն և եւ  
պերելն մի քայլ միայն անջրպետ կայ :  
Եթէ նիւթական դոյզն շահ նշմարեն  
անտարբերներն , կը տեսնես խկոյն , որ  
ամեն վտանգ յանձն կ'առնուն կրօնա  
կան գաղափարի ներկայացուցիչներու  
համար : Համակրութեան եւ սիրոյ  
պակասութեան զիմադրող սկզբունք  
չը կայ . տեսականապէս կարծեաց ազա  
տութեան ամենէն նպաստուոր ան  
տարբերն խկոյն կըսիսի պաշտպանել



այն մարդիկն, որք նորա կարծիքով,  
ամեն բան լաւ սխաի գործէին թէ  
իրենց և թէ բոլոր աշխարհի համար,  
էթէ հանգիստ մնային: Թող շարու  
նակեն նորա իրենց ճանապարհն. թող  
զօրաւոր լինին նորա, և ահա կը պաշա-  
պանուին: Յաղթողին օգնութեան գի-  
մեն համաշխարհական իմաստութիւն  
է: Աւելի զարմանալին այն է, որ երբ  
հալածեալ կարծիքն կը յաղթանակէ և  
ազգային պաշտաման հիմն կը դառ-  
նայ, անտարբերն իսկոյն այն կողմն  
կ'անցնի, առ երեստ հաղորդակից լի-  
նելով հաւատոյ բոլոր արտաքին արա-  
բողութեանց, որոց 'ի ներքուստ չը հա-  
ւատար: Արդ՛հետեւ իւր բոլոր կրօն-  
քրն է սէր հանգստութեան, ուստի  
կեղծաւորութիւնն եւս իւր պաշտած  
գբութիւնն է: Պաշտպանել իւր ի-  
բաւունքն բանի մի չհաւատարով, կը  
նշանակէ արդէն բանի մի հաւատալ:  
Այսու կը յարգուի արդեօք ճշմար-  
տութիւնն. եւ անտարբերն կ'ասէ,  
« Զի՛նչ է ճշմարտութիւնն », կեղծա-

ւորելով որպէս թէ կամի ճանաչել ճիշ-  
մարտութիւնն: Աւրեմն կեղծաւորու-  
թիւնն է լրումն անտարբերութեան,  
թէեւ ուղղակի կեղծաւորութիւն չեն  
անուաներ, այլ ուրիշ զարգարուն ա-  
նուն կը տան, կամ զԵրող-Իրան կան-  
ուանեն, կամ շարժարումն, կամ զԿողո-  
Իրան յօգուտ խաղաղութեան. փիլիսո-  
փաներէն մին ասած է, մարդիկ մեր  
մտածութեամբ միայն զբազան կ'երե-  
ւին, բայց հասարակութեան հետ կապ-  
ուած են: Անտարբերքն եւս արարու-  
ղութեանց ժամանակ կրօնասէր կը ձե-  
ւանան, բայց սրտով ուրիշ բանի հետ  
կապուած են:

Կրտսնէք ահա, թէ ի՛նչ տա-  
րբերներէ բաղկացած է անտարբե-  
րութիւնն. մի կողմէն անզգայութիւն,  
վայրագութիւն. միւս կողմէն թեթե-  
ւամտութիւն, անբարեմտութիւն,  
անձնասիրութիւն և կեղծաւորութիւն:  
Զարմանանք արդեօք, ոչ երբէք. վասն  
զի գիտենք արդէն, որ անտարբերու-  
թիւնն է ուրացութիւն ամենայն բա-



բոյական սկզբան :

Ճշմարտութիւնն եւ առաքինութիւնն, զոր կուգեն բաժանել, սկըբ բունքով մի և նոյն բանն են : Առաքինութիւնն, որ սչ այլ ինչ է, եթէ սչ Արարչի հետ ունեցած մեր ճշմարիտ յարաբերութեանց իրագործութիւնն, առաքինութիւնն ինքնին կենթադրէ արդէն գիտութիւն սոյն յարաբերութեանց : Անշուշտ գիտէ նա, որ կը գործէ : Մարդն իւր գոյութեան վախճանին կամ վերջին նպատակին հասնելու համար՝ պէտք է, որ ճանաչէ նոյն վտիճանն ու նպատակն, և այս պատճառաւ պէտք է ուրեմն, որ ճանաչէ զԱստուած : Եթէ խզենք այն կենդանի կապն, որով առաքինութիւնն միացած է ճշմարտութեան հետ և նո, վաւ կ'ուսագուի, կ'ուսուծանայ և կը որնանի, այնուհետեւ առաքինութիւնն կը մնայ լոկ բարոյական բնադրումն, դիւրին առ ՚ի եղծանիլ, կը մնայ լոկ անկերպարան աւանդութիւն, որ լուծուելով և խառնուելով ապախա-

նեալ սրտի խորհրդոց հետ՝ կ'անհամի, կ'այլագունի, եւ կոչնչանայ : Բայց յայսմանէ, անտարբերութիւնն ինքնին իսկ, առանց որ և իցէ բաղադրութեան, արդէն յայտնի նշան է ապականութեան և վատթարութեան հոգւոյ : Կարծիք չը կայ, որ քանի մի անկումներէ և երկար ապականութենէ զինի՝ միայն մարդկային հոգին անտարբերութեան վիճակին կը հասնի, յորում սչ միայն չը սիրեր զԱստուած, սչ միայն չ'երկնչի՞ր Աստուծմէ, այլ և սչ կը մտածէ այն մասին : Անտարբերութիւնն հոգւոյ մէջ հիւանդութիւն չէ, այլ կենդանի մահ : Մի ժողովուրդ՝ եթէ անտարբեր է, անտարբերութիւնն նորա ազգային մահն է :

Սոյն հորիզոնին վերայ, մի ամբողջ ժողովրդեան կենաց մէջ, նկատելու և զննելու է անտարբերութիւնն, որպէս զն լաւ հասկացուի թէ ի՞նչ է անտարբերութիւնն : Կան սկզբունքներ, որք իրենց բովանդակ բնութիւնն յայտնելու և բոլոր ազգեցութիւնն տարա,



ծելու համար ժամանակի կը կարօտին : Բացասական կամ ուրացական սկզբունքն մանաւանդ կարօտութիւն ունի միացեալ անհատներու բազմութեան մէջ քննուելու : Մի անտարբեր մարդն կամ անհատն այնքան դայթակղեցուցիչ երեւոյթ չունի զիտողն համար : Բայց ինչքան ստեղծ է, երբ մի ամբողջ ժողովուրդ անտարբեր է . ինչքան ահռելի է այն ընկերութիւնն, յորմէ հեռացած է Աստուած : Եթէ կրօնական զգացմունք չը կայ, ուրիշ ինչ աւելի զօրաւոր զգացմունք կայ, որ կարողանայ այն ժողովուրդէն, այն ընկերութենէն մի իրական և կենդանի միութիւն կազմել :

Բնազգումն, սիրոյ բնական յօժարութիւնքն կարող են թերեւս շատ թուլութեանց առաջն առնուլ և անհատական յարաբերութիւններն պահպանել : Սակայն մի ժողովուրդեան կամ ազգի ազգայնութեան գոյութիւնն պահպանելու համար միակ և ամենահրջօր միջոցն է կրօնական զգացումն :

Ազգայնութիւնքն այն չափով միայն տեւականութիւն ունին, որ չափով որ կրօնական զգացումն ունին : Երբ կրօնական զգացումն կը սպառի և անտարբերութիւնն կը տիրէ, ամեն միութիւն, ամեն ճշմարիտ յարաբերութիւն կը քակտի և ազգայնութիւնն կը քայքայի և կը կործանի : Եթէ կամիք, որ հասարակաց յարաբերութիւնքն հիմնուած լինին ոչ թէ դիպուածի, այլ օրինաւոր հիման վերայ . եթէ կամիք, որ ոգեւորուած լինին ոչ թէ կրից դողող շարժմամբ կամ պարագայից բռնի մղմամբ, այլ իբրեւ առողջ մարմին՝ առողջ եւ մաքուր աշեամբ, այս ազգեցութիւնն, այս բարիքն միայն կրօնքէն կարող էք սպասել : Ժողովուրդն կամ ընկերականութիւնն առանց կրօնի՝ անհողի մարմին է : Ամեն օրէնսդիրք զգացած են այս բանն . ամենքն նկատած են, որ սուրբ բաներն յարգելն կեանք է, իսկ ամբարշտութիւնն մահ է քաղաքական կարգաց և հաստատութեանց : Ամենեքեան



դիպացած են, որ քաղաք հիմնել առանց  
 կրօնի՝ կը նշանակէ ձեռնարկել շինու-  
 թեան ի վերայ օգոյ: Թո՛ղ ներուի ա-  
 սել, որ ընկերականութեան վերին կար-  
 գերու մէջ հասարակային առաքինու-  
 թիւնքն կը սնանին իրենց հիւթով, ի-  
 րենց գործունէութեամբ, իրենց խոս-  
 տացուած փառքով, բայց այսպէս չէ  
 ընկերականութեան ստորին կարգաց  
 համար: Ժողովրդեան բազմամասնու-  
 թեան ընկերական ճշմարիտ ոգին՝ կը  
 բռնական ոգին է: Աստուած միայն կա-  
 րող է օգնել խեղճ ժողովրդին՝ զինքն  
 քաղաքացի դառնու: Այն բազմու-  
 թիւնքն, որք կը ճանաչեն զԱստուած,  
 բայց բնաւ չեն հասկնար մեր քաղա-  
 քական դրութեանց և նաև բարոյա-  
 կանի վերացականութիւններն, այն  
 բազմութիւնքն Աստուծոյ անունէն  
 դատ՝ ուրիշ մի բաւ չը գիտեն որ կա-  
 րենայ զիրենք հիմնովին միացնել: Ա-  
 ռանց Աստուծոյ նքա ո՛չ պարտք կը  
 ճանաչեն, ո՛չ պարտաւորութիւնք: Երբ  
 կրօնական հաւատն խոյս կը տայ, իրեն

հետ կը տանի բարոյական հաւատն ևս:  
 Երդումներն այլ եւս երկիւղ չեն ազ-  
 դեր. գործքերն միայն իրենց յաջողու-  
 թենէն կը դատուին և ո՛չ էական բա-  
 րութենէն. ազատութիւնն այնուհե-  
 տեւ ոչ այլ լին է, եթէ ոչ անձնիւր  
 կամաց հետեւողութիւն, եթէ ո՛չ կա-  
 նոնաւորեալ անվտանգութիւն և ե-  
 սականութեան կամ անձնասիրութեան  
 սրբագործութիւն: Հասարակաց ա-  
 զէտներն առանց արժանաւորութեան  
 են և առանց մտիթարութեան: Միով  
 բանիւ, երբ կրօնական համոզումներ  
 չը կան, հասարակութիւնն կը ցամքի,  
 կը չորանայ և կամաց կամաց կը փոշ-  
 անայ: Եւ յեղափոխութիւնքն, յորս  
 հաւատացեալ ժողովուրդներն երբեմն  
 կը մխեն և կամրացնեն իրենց թռիչ-  
 ներն, բողբոլին մահաուիթ կը լինին  
 անհաւատ ժողովրդոց համար:

Անտարբերն, վերաբերութեամբ  
 առ մարդիկ, անտարբեր դրութեան  
 մէջ է արդեօք: Ձեզ կը թողում պա-  
 աասխանել, եղբարք: Նորա դրու-



Թիւնն անտարբեր է արդեօք վերաբե-  
 րու թեամբ առ Աստուած : Այսչափ  
 խօսելէն և ասելէն զինի, այս հարցումն  
 թերեւս շատ աւելորդ կերեւի : Ի՞նչ  
 պէս կարող ենք ենթադրել արդարեւ ,  
 թէ այն մարդկանց ընթացքն , որք ո՛չ  
 ճշմարտութիւնն սիրած են և ո՛չ նորա  
 պաշտօնանքն , կարող է յաչս Աստուծոյ  
 անտարբեր ընթացք համարուիլ : Այս  
 դատն Աստուծոյ կը վերաբերի . սոյն  
 դատին կամ ճշմարտութեան ծառա-  
 յել , կը նշանակէ Աստուծոյ ծառայել .  
 ճշմարտութենէ զատուիլ՝ կը նշանա-  
 կէ Աստուծմէ զատուիլ , Աստուծմէ  
 հեռանալ : Յիմարութիւն , կատարեալ  
 յիմարութիւն կը լինի կարծել , թէ  
 սոյն անտարբերութեան մօտ դարձեալ  
 Աստուծոյ փառաց վերաբերեալ բան  
 մնացած է : Ո՛չ ապաքէն Աստուած  
 լրիւ բովանդակուած է այն ճշմարտու-  
 թեան մէջ , զոր կ'արհամարհեն : Եւ  
 քանի որ այս այսպէս է , եթէ կամե-  
 նան յարգ և պատիւ մատուցանել  
 Աստուծոյ , պարտք հատուցանել ,

ո՛չ ապաքէն կը նշանակէ յետս ընդ կը-  
 րունկն դառնալ և համոզումներ խոս-  
 տովանիլ և ընդունիլ , մինչդեռ յայտա-  
 բարեցին որ անհնարին է որ և իցէ  
 համոզումն : Այսպիսի մի ընթացք ,  
 կամ նորէն արտաքին և առ երեսս կը  
 լինի , զոր անտարբերի կեղծաւոր յատ-  
 կութեանն վերագրեցինք , կամ կը լի-  
 նի ներքին և հաստատուն , որով կիւ-  
 մացուի թէ անտարբերն կը փոխէ և  
 կը թողու իւր բնաւորութիւնն : Ար-  
 նշանակէ թէ՛ անտարբերն կանոնաւո-  
 բութեան մէջ կը մտնէ և եթէ զգայ  
 որ հարկ է պարտք հատուցանել Աս-  
 տուծոյ , անշուշտ կը զգայ , որ առաջին  
 և ամենագլխաւոր պարտքն է հետեւելի  
 և ինդրել զԱստուած ճանաչելու : Աւ-  
 նայն է կարծել թէ ճշմարտութիւն և  
 Աստուած բաժան են իրարմէ . ունայն  
 է կարծել թէ առ Աստուած և առ  
 ճշմարտութիւն ունեցած պարտաւո-  
 բութիւններն իրարմէ տարբեր են :  
 Անտարբերութիւն առ ճշմարտու-  
 թիւնն , անտարբերութիւն է առ Աս-



տուած իսկ . վասն զի մի կողմէն կու-  
 բանայ ճանաչել զԱստուած , միւս կող-  
 մէն կը յօժարի սիրել , զոր Աստուած  
 կը սիրէ , պաշտպանել , զոր Աստուած  
 կը պաշտպանէ , ընտրել , զոր Աստ-  
 ուած նախապատիւ կը համարի :

Սլացէք մտօք դատաստանի աթոռոյն  
 առջեւ : Նայեցէք , զննեցէք , Աւետա-  
 բանի բուսով , վերջին աւուր տեսարա-  
 նըն : Ի՞նչ կը տեսնէք : — Գերագոյն դա-  
 տաւորի աջ կողմն՝ իւր բարեկամներն,  
 իսկ ՚ի ձախակողմն՝ իւր թշնամիքն :  
 Ո՞ւր են անտարբերներն : Միջին կամրգ-  
 մի կը կազմեն նոքա արդեօք : Ո՞չ , վա-  
 սըն զի միջին կարգ չերեւիր : Անհետա-  
 ցած են արդեօք Աստուծոյ տիեզեր-  
 քէն , իբրեւ թէ անզի չ'է գտնուած  
 իրենց համար : Ո՞չ , անհաւատաղի է  
 այս : Պէտք է ուրեմն որոնել անտար-  
 բերներն կամ Աստուծոյ բարեկամաց՝  
 կամ թշնամեաց մէջ : Բարեկամաց մէջ  
 արդեօք , — Բայց ո՞չ ապաքէն ասած է  
 Աստուած՝ թէ նոքա միայն պիտի մըտ-  
 նեն երկնից արքայութիւնն , որոնք իւր

կամքն կատարած են երկրիս վերայ .  
 իսկ անտարբերներն ո՞չ միայն չեն կա-  
 տարած Աստուծոյ կամքն , այլ և ո՞չ  
 գոյն ինչ աշխատած են զԱստուած ճա-  
 նաչել : Աստուած ասած է՝ ոչետք է  
 վերատին ճնանիլ՝ արքայութիւնն մըտ-  
 նելու համար . իսկ անտարբերներն ի-  
 բնեց բոլոր կեանքն անցուցած են հին  
 մարդոյ անմարուր խանձարուբքին մէջ :  
 Նոքա յօժարութեամբ և կամովին մը-  
 նացած են սոյն խանձարուբքին մէջ և  
 գոնէ փափաքով կամ ըղձիւ անգամ  
 նոր մարդ եղած չ'են : Նոքա գոնէ  
 ճշմարտութեան սիրով կամ ցանկու-  
 թեամբ ճշմարտութեան պատկանած  
 չեն : Եւ ո՞չ թէ միայն խորտակած չ'են  
 մոլորութեան և մեղաց ամբթալի շքի  
 թայն , այլ զդացած անգամ չեն զայն :  
 Աստուած նախանձոտ Աստուած է .  
 չեղբութիւնն իսկ՝ իրեն թշնամանք կը  
 համարի Աստուած , վասն զի Աստուած  
 մեր բոլոր սիրտն կուզէ . նա թերի բան  
 կարող չ'է ուզել : Աստուած թշնամա-  
 նած կը համարի զինքն ո՞չ միայն սոյն



անորոր և ծաղրելի ատելութենէն, ու բոլ զինքն կ'ատեն, այլ և այն սէրէն, զոր իրեն կը զանան: Եւ սակայն ան տարբերներն ամենեւին սիրած չ'են զԱստուած. այլ սիրած են ինչ որ նա կ'ատէ. նորա պատուած չ'են զԱստուած և ոչ իրենց ատելութեամբ, այլ միայն արժանի դատած են իրենց արհամարհանաց, այսինքն ատելու անգամ արժանի համարած չ'են:

Ասան զի, եղբայրք, ատելութիւնն որչափ որ սոսկալի է, դարձեալ անտարբերութենէն լաւ է: Ատելն դունէ մի խոստովանութիւն է, որ նորա Աւետարանաւ ճանաչած են այն ճրչմարտութիւններն, որք կը դատապարտեն և կը վիրաւորեն: Այս մի օտարոտի, բայց վաւերական եղանակ է խաղաղութեան պատգամի ընդունելութիւն ծանուցանելու համար: Կը նշանակէ որ պատգամն քարոզուած է, աւետիքն հնչուած է: Այս մի սկիզբն է իմացականութեան, որուն կարող է հետեւիլ աւելի կատարեալ իմացականութիւնն:

Ատելութիւնն շատ անգամ սիրոյ յառաջաբանն եղած է, երբ հոգին ամենայն քաջութեամբ համբերած է հանդիսական ճգնաժամին: Իսկ անտարբերութիւնն, որ նշան է մարդոյ և Աստուծոյ մէջ եղած ամենամեծ հեռաւորութեան, անտարբերութիւնն վերջին զարհուրելի թշնամանքն է առ Աստուած: Մի ապաւինիք ուրեմն ձեր անտարբերութեանն, ո՞վ անտարբերներ, եւ մի ասէք թէ ձեր չեղորութիւնն զձեզ կը պաշտպանէ: Իմացէք որ այդ երկչոտ և թուլամորթ պատերազմն կը կորուսանէ զձեզ: Ելէք այդ անանուն գիրքէն, այդ անորիչ վիճակէն: Եղէք, ինչ որ էք խկապէս: Անցէք այն դասն, ուր պիտի դասուիք առաջի Աստուծոյ: Եւ եթէ կարող չէք բարեկամ լինիլ, գէթ թշնամի եղէք:

Այս փափաքն ունին ամենքն, որոնք զձեզ կը սիրեն և ձեր վերայ կը գթան: Մի կարծէք բնաւ թէ հաճոյք կըզգան ձեր անտարբերութենէն, մի կարծէք բնաւ թէ բարեկամութիւնն



կը համարին ձեր անտարբերութիւնն,  
քաւ լիցի . նորա այն ժամանակ աւել-  
լի պիտի զգան թէ մտայցած են ձեզ-  
երբ դուք աւելի հեռացած կարծէք  
զձեզ : Նորա պիտի յուսան , որ ձեր  
մարմնոյ մէջ ցցուած նեւոն , զոր թե-  
ւէն վերաւորուած թռչունի նման ,  
պիտի կրէք այնուհետեւ , ուր որ եր-  
թաք , այն նեւոն պիտի ստիպէ զձեզ  
ձեր հպարտութեան բարձրութենէն  
կշանիլ և խոնարհիլ նորա առջեւ , որ  
այն նեւոն ցցած է ձեր մարմնոյն մէջ  
և որ միայն կարող է զայն հանել : Մինչ  
ի թշնամութիւն եւ յատելութիւն  
բարձրացած անտարբերն՝ այլ ևս կա-  
րող չէ վերստին անտարբերութեան  
մէջ ընկնիլ : Մի. քայլ միայն կայ նորա  
համար , այն է սիրել : Քաղմուցէք ուրե-  
մըն անտարբերներու մէջ , ո՛վ թշնամիք  
ճշմարտութեան , այսինքն ո՛վ ճշմար-  
տութենէ հարուածեալ սրտեր , ո՛վ  
թշուառութենէ և մեղքէ յաղթեալ  
սրտեր , ո՛վ բեկեալ սրտեր , որոց մէջ  
երկնային հոգւոյ դործն սխուած է և

պիտի շարունակուի թերեւս . ո՛վ վե-  
րաւոր սրտեր , դուք որ յարուցիք ընդ-  
դէմ Աստուծոյ այն խորհրդաւոր պա-  
տերազմն , ուր յաղթութեան դապինին  
պարտելոյն ճակտի համար պահուած  
է : Եւ իցէ թէ ձեր պարտութեամբ  
անտարբերութե՞ն դասակարգերն լու-  
սաւորելէն զինի՞ կարողանայիք ձեր զղջ-  
մամբ եւ դարձիւ եւս բազմացնել  
զգաստ բարեկամոյն Աստուծոյ , Յի-  
սուսի Քրիստոսի , ճշմարտութեան :  
Երանի՛ր աւուրն և ժամուն , յորում  
անտարբերութիւնն տեղի կը տայ և  
կը տիրէ ժողովրդեան մէջ քաղց եւ  
ճարաւ ճշմարտութեանն Աստուծոյ :






Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page.

Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page.

Faint, illegible text, possibly bleed-through from the reverse side of the page.





1208

«« Ազգային գրադարան



NL0331428

«« Ազգային գրադարան



NL0331427

«« Ազգային գրադարան



NL0331426

«« Ազգային գրադարան



NL0331425

«« Ազգային գրադարան



NL0331423

«« Ազգային գրադարան



NL0331422

«« Ազգային գրադարան



NL0331421

«« Ազգային գրադարան



NL0331420

